

Եթու. Շահ—Կուլի միրզայ, ծնեց չուրեքշաբաթի օրն 11 մըհառամի 1223: 9 զաւակներ ունէր, սրանցից երեքն ուստրաներ՝ վեց դուստրներ էին: Ըռաջին որդին Արդաշիր միրզայ, մայրն էր դուստր Դաշլուի կաձար Հասան խանի: 2, Մահամետ Ազի խան, մայրն էր դուստր Դուլուի կաձար Մահամետ խանի: 3, Խալիլ ուղահ միրզայ, մայրն էր ի ցեղէն Բօղ—չղուղու:

1. **Մահամետ Մէյթի միրզայ, ծնեց գիշերն լոյս կիւրակի՝ 1 շավվալի 1233 հիջրի, ունէր 9 զաւակներ, որոնց ցից չորս ուստրներ՝ հինգն դուստրներ էին: Ըռաջին որդին Մահամետ—Քեարիմ խան, որի մայրն էր դուստր Եղաէդդինը կաձար Ամիր խանի: 2, Մահամետ—Աղթէկ խան, մայրն Թէհրանցի: 3, Մահամետ—Քահիմ խան, մայրն էր դուստր Կուանլու Մէհր Ալի խանի: 4, Լութֆ Ալի խան, համամայր վերնոյն:**

1.Ա. Վէյ Խոսրով միրզայ, ծնել է զիշերն լոյս հինգշաբաթի 13 սափարի 1224 հիջրի, համամայր է Վէյքեավուզ միրզին, ունէր ութ զաւակներ, որոնցից 3 ուստրներ, 5 դուստրներ: Ըռաջին որդին Մահամետ Սաղէկ խան, մայրն էր դուստր Թէհրանի Թէպլարբէդի Մահամետ թաղի խանի: 2, Մուրթուզա Կուլի խան: 3, Մահամետ—Նիւէյն միրզայ. երեքեանն էլ մին մօլից էին ծնած:

1.Բ. Վէյյու մարս միրզայ, Խլսանի, որի արտղոսն էր Եբուլմուլը, ծնեց երեքշաբաթի օրն 25 ջամադիէլ ախրի՝ 1224 հիջրի, ունէր 6 զաւակներ, որոնցից չորս ուստրներ և երկուսն դուստրներ: Ըռաջին որդին Հուշէնկ միրզայ, որի մայրն էր

Վրաստանի կողմէն: 2, Ախամուք միրզայ, մայրն էր դուստր Մազանդարանցի Լէշքէր նուիս միրզաց կաղըի: 3, Սուլթան Ահմէդ միրզայ, մայրն էր Դաւուի կաձար Մահամետ Հասան խանի: 4, Իղրիս դուստր միրզայ, համամայր Հուշանկ միրզին:

1.Գ. Զհանշահ միրզայ, համամայր Մահամետ միրզին, ծնեց լոյս կիւրակի 5 րամազանի 1224 հիջրի, ունէր 9 զաւակներ, որոնցից 6 ուստրներ և 3 դուստրներ էին: Ըռաջին որդին Աղլ—շահ միրզայ: 2, Զհանդար միրզայ: 3, Կումբուզ միրզայ: 4, Ֆազլ շահ միրզայ, համամայր Զհանդար միրզին: 5, Մահամետ Հիւսէյն միրզայ, համամայր Աղ շահի հետ: 6, Մահամետ Հաշիմ միրզայ:

(Ա ՀԵՊԱՔԱՅՈՒՄ)

ԳԱԼՈՒՑ ՇԵՐՄԱՉԱՆԵԱՅ.

ԱԶԳԱՅԻՆ

ԽՆՆԵԲՈՐԴԻ ՏԵՐԵԳԱՐ

Վէհ. Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տէորդայ Դ. Աբբազին ագուղիւ կոսի օծման Թ-րդ տարեգարձը՝ որ ի 21-ն ամսոյս էր՝ արժանաւոր հանդիսիւ եւ շքով կատարեցաւ ի 23-ն ամսոյս յաւուր կիւրակէի Հոգեգալստեան:

Վէհ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԵԻԲՈԿՅԱՆ

Վէհ. Հայրապետ մեր ի 27-ն ամսոյս գնաց յամարանոցն իւր ի Բիւրական:

ՆՈՒԷՐ ՑԱՆՈՒՆ ՃԵՄՈՐՈՆԻ

Տվիսեաց Հայոց Ա. Նշան Եկեղեցւոյ
միաբան բարեկրօն Յովհաննէս քահա-
նայ Տէր – Գրիգորեանց՝ յատուկ գրու-
թեամբ յանուն եւ ինպաստ Ա. Գէոր-
գեան Ճեմարանի Մայրավանիցս նուի-
րեց մի հազար հինգ հարիւր ռուբլի, եւ
Վ. Հայրապետ օրհնութեան Կոնդակ
շնորհեց յանուն նորին եւ չորից որ-
դոցն ըստ բազմանաց նոցին:

Զայս Հրատարակելով ի գիտութիւն
եւ յուրախութիւն մերազնեայց միան-
գամայն Հրապարակական շնորհակա-
լութիւն կյայտնեմք յիշեալ քահա-
նային եւ որդոց նորին:

ԵՊԻՍԿՈՊՈՍՈԿԱՆ ԶԵԽԱՌԻՒԹՅՈՒՆ

Ի 13 - ն ամսոյս յաւուր տօնի Համ-
բարձմանն Քրիստոսի՝ Արժ. Մատթէոս
Ծ. Վարդապետ Եղմիրլեանց Կ. Պոլսե-
ցի, — որ Կ. Պոլսոյ Գերապատիւ Պատ-
րիարք Ներսէս Ա. Արքեպիսկոպոսի
յանձնարարականաւ Եկած էր այսր ի
Ա. Էջմիածին, — արժանացաւ Եպիսկո-
պոսական աստիճանին Ճեռնադրու-
թեամբ Վ. Հայրապետի:

Արդարեւ Հայաստանեայց առաքե-
լական Եկեղեցիս կարօտ է միշտ մանա-
ւանդ ներկայ ժամանակում՝ հմուտ՝
ուշիմ՝ բանիբուն՝ եւս առաւել կրօնի
եւ Եկեղեցւոյ օրինաց՝ կարգաց եւ ա-
ւանդութեանց ջերմ նախանձախնդիր
եւ բարի վարուք եւ առաքինութեամբ
զարդարեալ հովուաց եւ անձնանուէր

մշակաց, որպիսեաց կարգը գառակցե-
լոյ արժանաւորութիւնը տեսանք յի-
շեալ Եղմիրլեանցի վերայ. ուստի ան-
շուշտ եմք՝ զի Եպիսկոպոսական վսեմ՝
աստիճանին մէջ առաւել եւս իւր ջան-
քերը բազմապատկէ յօգուտ եւ ի պայ-
ծառութիւն Եկեղեցւոյ եւ Ազգի Հա-
յաստանեայց:

ՆՈՐԸՆՏԻԲ ՀՈԳԸԲԱՐՁՈՒՔ

ՆԵՐԱ. ԳՎԻԱԿՈՑԻ

Տվիսեաց Հայոց Ներսիսեան աղգա-
յին - Հոգեւոր դպրանոցի Հոգաբար-
ձութեան անդամոց քառամեայ շրջա-
նը լրացած լինելով՝ ըստ տրամադրու-
թեան կանոնագրութեան յիշեալ դպրա-
նոցի՝ տեղական ժողովրդեան կողմանէ
նշանակուած պատգամաւորաց քուէար-
կութեամբ Հոգաբարձութեան նոր ան-
դամներ ընտրեցան, զորս Վ. Հ. Հայ-
րապետ ամենայն Հայոց ըստ յայտա-
րարութեան Գեր. Գաբրիէլ Արքեպիս-
կոպոսի Ա. յլազեանց Թեմակալ – Առաջ-
նորդի վիճակին՝ յատուկ օրհնութեան
Կոնդակաւ Հաստատեց իւրեանց պաշ-
տօնին մէջ:

Ա. Հաւասարիկ նորընտիր անդամոց ա-
նուանց ցուցակը աստ կնշանակեմք ըստ
առաւելութեան քուէից:

Մեծապատիւ պարոնայք
Յարութիւն Մարկոսեանց
Արքար Յովհաննէսեանց
Գէորգ Եւանդուկեանց
Խսահակ Պոլովիեանց
Մարկոս Դոլուխանեանց
Գէորգ Քուչարեանց

Պղատոն Գուրգէնը էկեանց
Պօղոս Ղամբարեանց
Սողոմոն Մելիք – Մեհրաբեանց
Խաչատուր Քալանթարեանց
Գէորգ Աքիմեան
Գասպար Նահապետեանց
Իսկ սոցա տեղակալներ
Բարեկրօն Ղեւոնդ քահ. Խարազեանց
Մեծ. Պարոնայք
Գաբրիէլ Սունդուկեանց եւ
Գաբրիէլ Հախվերտեանց

Արարատ ամսագրոյս Խմբագրութիւն շնորհաւորելով յիշեալ նորընտիր անդամոց Հոգաբարձական ծանր բայց աղգօգուտ եւ վսեմ պաշտօնը՝ կմաղթէ կարողութիւն եւ յաջողութիւն; միանդամայն կյուսայ՝ որ սոքա պիտի սիրեն խօսքէն աւելի գործոց արդիւնքը ցուցանել եւ իրական յառաջադիմութեան շաւղին մէջ զարգացուցանելով փառաւորել ներսիսեան դըպրանոցը ներկայ Գեր. Առաջնորդ Տ. Գաբրիէլ Ա. Արքեպիսկոպոսի հետ սիրով եւ համաձայնութեամբ խորհելով եւ գործակցելով ըստ ամենայնի եւ ամեն բանի մէջ:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻԽ ՀՈԳԱԲՈՐՉՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԽՈՐ
ԴՊՐՈՑԻ ՀՈՅՈՑ ԱՂԵԲԱՆԴԻԱՊՈՅՈՅՑ.

ԽԱՀԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՐ ՎԻՃԱՇԽ:

Հոգաբարձութիւնս վիճակային Հոգեւոր Պըպըցի Հայոց Աղէքսանդրապօլու ըստ տրամադրութեան 30-րդ յօդուածոյ կանոնադրութեան նոյն Պպրոցի ընդ այսմառ աքելով ի Խմբագրութիւն դաւարեկան համառօտ հաշիւ մտից և ծախոց վիճակային Հոգեւոր Պպրոցի վասն անցեալ

1875 ամի. Խոնարհաբար Խնդրէ հրատարակել զայն յէջ ազգաշահ լրագրոյն Արարատայ ի զիտութիւն Հայազնեայց:

Նախագահ Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանց.
Հոգաբարձուք Յովանէփ Ա. Ք. Կոստանեանց
Մկրտիչ Կոստանեանց
Յակոբ Ղամապեանց
Յարութիւն Զիթուլցեանց
Գործավար Կ. Զանիքէկեանց

Ի 54 ՅՈՒՆԵՐՏ 1876 թ.

Ի Վ. ՎՐԵՄ+ԿԱՆԿՐԵԱԿԸԼ:

Ա. ՀԱՅ-ԱՐ-ՅԱԿԱՎԻՆ Բ-Ա:

Նախագահ Հոգաբարձութեան դպրոցի Փոխանորդ թեմին Աղէքսանդրապօլու, վեց Հոգաբարձուք, յորոց մինն վարէ զպաշտօն գանձապահութեան և մի գործավար:

Ակց կանգիսագք. յորոց մինն ի պատճառս հրաժարման միոց յանդամանց Հոգաբարձութեան պարտի վարել զպաշտօն նորաւ Քառասուն պատգամարդք, Հաւատարմատարք ի կողմանէ ժողովրդեան յընտրել զՀոգաբարձուս:

Բ. Ո-Ա-Ն-Ջ-Ա-Վ-Ի-Ն Բ-Ա:

Ուսուցիչք.

Կըուի Հայոց ուղղափառ դաւանութեան 120

Աշխարհազրութեան, Ենդհանուր Պատ-

մութեան, Մարդակազմութեան և Հայոց

լեզուի :

Հայոց լեզուի և Պատմութեան Հոյոց ի միում դասատան և Բնագիտութեան . 600

Թուարանութեան բոլոր դասատանց . 360

Վերակացութեան և Բարյախօսու-

թեան 300

Թուսաց լեզուի ի բարձր դասարանս . 450

Պատմութեան Թուսաց, Թուսաստանի աշխարհազրութեան, սկզբանք Աղերբայի (զրահաշիւ) և Երկրաչափութեան իշորբորդ դասատան. 150

Վայելչազրութեան Հայոց Գծաղրու-

թեան և Երկրաչափութեան յԲ և յԳ դա-

սատունս 300